



ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

EIMC N 15-1/14
Տարեկան 2014

ՀԱՅԷԿՈՍՈՆԻՏՈՐԻՆԳ



(ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ)

ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ
ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք



- ՕԴԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ
- ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐ
- ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐ



<http://www.armmonitoring.am>

Բովանդակություն

ՕԴԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ	4
Երևան	4
Գյումրի	8
Վանաձոր.....	9
Ալավերդի	11
Հրազդան.....	15
Արարատ.....	18
Պասիվ նմուշառիչներով մթնոլորտային օդի.....	19
դիտարկումները հանրապետության տարբեր բնակավայրերում	19
ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐ.....	20
Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք	30
Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք.....	33
Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք	34
Սևանի ջրավազանային կառավարման տարածք	36
Արարատյան ջրավազանային կառավարման տարածք	37
Հարավային ջրավազանային կառավարման տարածք	37
ՀՀ ջրամբարներ	40
Արաքս գետ	42
Սևանա լիճ.....	43
«Եվրոպայի մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ ծրագիր (EMEP)».....	63
Մթնոլորտային օդում որոշվող ցուցանիշների ցանկ	65
Մակերևութային ջրերում որոշվող ցուցանիշների ցանկ	65
Տեղումներում որոշվող ցուցանիշների ցանկ	66
Մթնոլորտային օդում որոշ աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները.....	67
Էկոլոգիական նորմեր	68
Մակերևութային ջրերի աղտոտվածության չափանիշներ.....	69
«Արտակարգ բարձր աղտոտվածություն» և «բարձր աղտոտվածություն» արտահայտությունների սահմանումը	70

ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԶՐԵՐԻ
ԵՎ ՄԹՆՈՂՈՐՏԱՅԻՆ ՕԳԻ
ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՑԱՆՑԸ

ՄԱՍՏԱՔ 1 : 1 500 000



● Բնակավայրեր, որտեղ իրականացվում է մթնոլորտային օդի գետնամերձ շերտի մոնիտորինգ

Մակերևութային ջրերի մոնիտորինգի դիտակետերն ու համարները

- ▲ 28 գետերի
- 129 լճերի և ջրամբարների

ՕՂԱՅԻՆ ԱՎԱԶՄԱՆ

2014թ.-ի ընթացքում օդային ավազանի որակի դիտարկումներ կատարվել են հանրապետության Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Ալավերդի, Արարատ, Կապան, Քաջարան, Սևան*, Չարենցավան, Ծաղկաձոր քաղաքներում, Սյունիք (Սովխոզ) գյուղում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում 2014թ.-ի ընթացքում տեղադրված է եղել պասիվ նմուշառման 240 դիտակետ: Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Ալավերդի, Արարատ, Ծաղկաձոր քաղաքներում մթնոլորտային օդի ակտիվ եղանակով նմուշառումներ իրականացվում են 17 ստացիոնար դիտակայանում: Երկու ռիսկային քաղաքում՝ Երևանում և Ալավերդիում, և ֆոնային տարածքում՝ Ամբերդում, գործում է 7 ավտոմատ դիտարկման կայան:

Գործող 16 դիտակայանների միջոցով ակտիվ եղանակով վերցված օդի 17861 փորձանմուշում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Երևան քաղաքի փոշու որոշ փորձանմուշներում ընդհանուր առմամբ որոշվել է 30 մետաղ: Հանրապետության 11 քաղաքներում տեղադրված պասիվ նմուշառման 226 դիտակետերից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար ընդհանուր առմամբ վերցվել է օդի 20982 փորձանմուշ: Երևան և Ալավերդի քաղաքներում տեղադրված կայաններում ավտոմատ դիտակայանների միջոցով ածխածնի մոնօքսիդի, ծծմբի երկօքսիդի և ազոտի օքսիդների պարունակությունները որոշելու համար ընդհանուր առմամբ կատարվել է օդի համապատասխանաբար 347538 և 109202 դիտարկում**:

Հիմնական ծրագրի շրջանակներում ընդհանուր առմամբ վերցվել է օդի 495583 փորձանմուշ:

Գյումրի, Վանաձոր, Արարատ, Կապան, Քաջարան, Չարենցավան քաղաքների և Սյունիք գյուղի մթնոլորտում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիաների բաշխվածության քարտեզները ըստ պասիվ նմուշառիչների տվյալների հասանելի են <http://www.armmonitoring.am/> ինտերնետային կայքում:

Երևան

Քաղաքի №1, №2, №7, №8, №18, №16-1 և №19 դիտակայաններում շուրջօրյա (24-ժամյա) ակտիվ նմուշառման եղանակով կատարվել են օդային ավազանի դիտարկումներ: Որոշվել են մթնոլորտում փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները:

Ակտիվ նմուշառման միջոցով ընդհանուր առմամբ վերցվել է օդի 9963 փորձանմուշ: Որոշված նյութերի միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները (ՄԹԿ):

Մթնոլորտային օդի դիտարկումներ՝ ավտոմատ սարքերի միջոցով կատարվել են քաղաքի №1, №7, №8, №16-1, №19 դիտակայաններում: Որոշվել են մթնոլորտում ածխածնի մոնօքսիդի, ծծմբի երկօքսիդի և ազոտի օքսիդների պարունակությունները: Ավտոմատ սարքերի միջոցով ընդհանուր առմամբ կատարվել է օդի 347538 դիտարկում: Ավտոմատ դիտարկումների տվյալների համաձայն, քաղաքի մթնոլորտում որոշված նյութերի միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել ՄԹԿ-ները: Որոշված նյութերի տարվա առավելագույն կոնցենտրացիաները դիտվել են՝ ածխածնի մոնօքսիդին՝ հունվարի 1-ին ժամը 20⁰⁰-ին՝ 10.536 մգ/մ³, ծծմբի երկօքսիդին՝ սեպտեմբերի 12-ին ժամը 17⁰⁰-ին՝ 2.263 մգ/մ³ (Կենտրոն համայնքի տարածքի մթնոլորտում):

* Սևանում դիտարկումները կատարվել են 2014թ.-ի մայիսից մինչև սեպտեմբեր ամիսների ընթացքում (սեզոնային նմուշառում)



** Ծաղկաձոր քաղաքը ներկայցվում է առանձին

Պասիվ նմուշառիչներով օդային ավազանի դիտարկումներ կատարվել են քաղաքի 48 դիտակետերում: Վերցվել է օդի 4715 փորձանմուշ, որոնցում որոշված ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել ՍԹԿ-ները:


Ակտիվ նմուշառման եղանակով դիտարկումների արդյունքները Երևանում.

Որոշվող նյութերը (դիտակայանների քանակ)	Դիտարկված առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ ³ (դիտակայանի համար)	ՍԹԿ-ից գերազանցումների քանակ		Միջին տարեկան կոնցենտրացիա (մգ/մ ³)	ՍԹԿ միջին օրական (մգ/մ ³)
		>1 ՍԹԿ	>5 ՍԹԿ		
Ծծմբի երկօքսիդ (7)	0.067 (դիտ. N18)	18	-	0.020	0.05
Ազոտի երկօքսիդ (7)	0.088 (դիտ. N18)	175	-	0.018	0.04
Փոշի (7)	2.387 (դիտ. N18)	694	34	0.126	0.15
Գետնամերձ օդոն (7)	0.257 (դիտ. N19)	53	1	0.010	0.03


Ավտոմատ սարքերի միջոցով քաղաքի ընդհանուր մթնոլորտում որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունների պատկերները տրվում են գրաֆիկների տեսքով:



Մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի(SO₂) միջին տարեկան կոնցենտրացիոն բաշխվածություն (ըստ պասիվ նմուշառիչների ավալների) 2014/ԵՐԵՎԱՆ



Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO₂) միջին տարեկան կոնցենտրացիոն բաշխվածությունն (ըստ պասիվ նմուշառիչների ավազների) 2014/ԵՐԵՎԱՆ




Գյումրի

Քաղաքի 1 մշտական դիտակայանում մթնոլորտում փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 287 փորձանմուշ:

Փոշու միջին տարեկան կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 2.0 անգամ:

Քաղաքի պասիվ նմուշառման 24 դիտակետերից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար ընդհանուր առմամբ վերցվել է օդի 2496 փորձանմուշ:


Ծծմբի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.5 անգամ: Ազոտի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիան ՍԹԿ-ն չի գերազանցել:



Վանաձոր

Քաղաքի №1, №2 և №3 մշտական դիտակայաններում շուրջօրյա (24 ժամյա) ակտիվ նմուշառման եղանակով կատարվել են օդային ավազանի դիտարկումներ: Որոշվել են մթնոլորտում ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և փոշու պարունակությունները: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 3283 փորձանմուշ: Որոշված նյութերի միջին տարեկան կոնցենտրացիաները ՍԹԿ-ները չեն գերազանցել:

Քաղաքի 24 դիտակետերում տեղադրված պասիվ նմուշառիչների միջոցով ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար ընդհանուր առմամբ վերցվել է օդի 2491 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.2 անգամ: Ազոտի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիան չի գերազանցել ՍԹԿ-ն:




Ակտիվ նմուշառման եղանակով դիտարկումների արդյունքները Վանաձորում.


Որոշվող նյութերը (դիտակայանների քանակ)	Դիտարկված առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ ³ (դիտակայանի համար)	ՍԹԿ-ից գերազանցումների քանակ		Միջին տարեկան կոնցենտրացիա (մգ/մ ³)	ՍԹԿ միջին օրական (մգ/մ ³)
		>1 ՍԹԿ	>5 ՍԹԿ		
Ծծմբի երկօքսիդ (3)	0.095 (դիտ. N2)	40	-	0.013	0.05
Ազոտի երկօքսիդ (3)	0.090 (դիտ. N2)	17	-	0.017	0.04
Փոշի (3)	3.655 (դիտ. N1)	236	26	0.120	0.15

Ոչ ավտոմատ շուրջօրյա ակտիվ (24- ժամյա) նմուշառման եղանակով որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունների գրաֆիկական պատկերները

Ծծմբի երկօքսիդ (SO_2)
Կոնց (մգ/մ³)



Ազոտի երկօքսիդ (NO_2)
Կոնց (մգ/մ³)



Ալավերդի

Քաղաքում գործող №1, №2, №3 դիտակայանում շուրջօրյա (24-ժամյա) ակտիվ նմուշառման եղանակով կատարվել են օդային ավազանի դիտարկումներ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար: Փոշու պարունակության որոշման համար դիտարկումները կատարվել են Ալավերդի քաղաքում գործող №1 և №2 դիտակայանում: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 2897 փորձանմուշ: Որոշված նյութերի միջին տարեկան կոնցենտրացիաները ՍԹԿ-ները չեն գերազանցել:

Քաղաքի արևելյան ծարամասում գտնվող մոնիտորինգի կայանում դիտարկումներ են կատարվել մթնոլորտում ածխածնի մոնօքսիդի, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների պարունակությունները որոշելու համար: Ընդհանուր առմամբ ավտոմատ սարքերի միջոցով կատարվել է օդի 109202 դիտարկում:



Ավտոմատ դիտարկումների տվյալների համաձայն, ավտոմատ կայանի շրջակայքի մթնոլորտում որոշված նյութերից ծծմբի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 3.1 անգամ: Մնացած նյութերի միջին տարեկան կոնցենտրացիաները ՍԹԿ-ները չեն գերազանցել: Ծծմբի երկօքսիդի տարվա առավելագույն կոնցենտրացիան դիտվել է հունվարի 17-ին ժամը 0¹⁰-ին՝ 3.654 մգ/մ³, ազոտի երկօքսիդինը՝ մայիսի 6-ին ժամը 20⁰⁰-ին՝ 0.202 մգ/մ³, ազոտի մոնօքսիդինը՝ հուլիսի 2-ին ժամը 10⁰⁰-ին՝ 0.098 մգ/մ³:

Ալավերդի քաղաքում և նրա շրջակայքում տեղադրված 38 դիակետում պասիվ նմուշառիչներով ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար ընդհանուր առմամբ վերցվել է օդի 3941 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.6 անգամ: Ազոտի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիաները ՍԹԿ-ները չեն գերազանցել:


Ակտիվ նմուշառման եղանակով դիտարկումների արդյունքները Ալավերդում.

Որոշվող նյութերը (դիտակայանների քանակ)	Դիտարկված առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ ³ (դիտակայանի համար)	ՍԹԿ-ից գերազանցումների քանակ		Միջին տարեկան կոնցենտրացիա (մգ/մ ³)	ՍԹԿ միջին օրական (մգ/մ ³)
		>1 ՍԹԿ	>5 ՍԹԿ		
Ծծմբի երկօքսիդ (3)	0.078 (դիտ. N1)	23	0	0.016	0.05
Ազոտի երկօքսիդ (3)	0.088 (դիտ. N2)	8	0	0.012	0.04
Փոշի (2)	1.805 (դիտ. N2)	242	74	0.225	0.15


Ավտոմատ սարքերի միջոցով կայանի շրջակայքի մթնոլորտում որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունների պատկերները տրվում են գրաֆիկների տեսքով:





Մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO₂)
 միջին տարեկան կոնցենտրացիոն բաշխվածություն
 (ըստ պասիվ նմուշառիչների սվալների)
2014/ԱԼԱՎԵՐԴԻ



**Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի(NO₂)
միջին տարեկան կոնցենտրացիոն բաշխվածությունն
(ըստ պասիվ նմուշառիչների տվյալների)
2014/ԱԼԱՎԵՐԴԻ**



- Պայմանանշաններ**
- Բնակավայրերի սահման
 - Ընդհանրական և վարդ ցներ
 - Գետային ցանց
 - Էրկայք-գծեր
 - Կոնցենտրացիոն բաշխվածության կետեր
 - Դիտակետեր





Հրազդան


Քաղաքի 1 մշտական դիտակայանում ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և փոշու պարունակությունների որոշման համար վերցվել է օդի 1078 փորձանմուշ: Որոշված նյութերի միջին տարեկան կոնցենտրացիաները ՍԹԿ-ները չեն գերազանցել:

Քաղաքի 20 դիտակետում տեղադրված պասիվ նմուշառիչներով դիտարկումներ են կատարվել մթնոլորտում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 2020 փորձանմուշ, որոնցում որոշված նյութերի միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել ՍԹԿ-ները:


Ոչ ավտոմատ՝ շուրջօրյա ակտիվ (24- ժամյա) նմուշառման եղանակով որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունների գրաֆիկական պատկերները




**Մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի՝ (SO₂)
միջին տարեկան կոնցենտրացիոն բաշխվածությունն
/ըստ պասիվ նմուշառիչների տվյալների/
2014 / Հ Ր Ա Ջ Դ Ա Ն**





- Պաշխանանշաններ**
- Բնակավայրերի սահման
 - Սպորտային գոտիներ
 - Ճանապարհներ և փողոցներ
 - Քեոսային ցանց
 - Կոնցենտրացիոն բաշխվածության իզոգոծեր
 - Դիտակետեր



**Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO₂)
միջին տարեկան կոնցենտրացիոն բաշխվածությունն
/ըստ պատվիվ նոմոշառիչների տվյալների/
2014/ՀՐԱԶԴԱՆ**



- Պայմանանշաններ**
- Տակավայրերի սահման
 - Աղբյուրակ ջրավառ
 - Ճանապարհներ և փողոցներ
 - Գետային ցանց
 - Կոնցենտրացիոն բաշխվածության իզոգծեր
 - Ֆուտակետեր



Արարատ

Քաղաքի 1 մշտական դիտակայանում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար շուրջօրյա (24-ժամյա) ակտիվ նմուշառման միջոցով վերցվել է օդի 353 փորձանմուշ:

Փոշու միջին տարեկան կոնցենտրացիան ՍԹԿ-ն (ՍԹԿմիջ.– 0.1 մգ/մ³) գերազանցել է 1.2 անգամ::

Քաղաքի 12 դիտակետում տեղադրված պասիվ նմուշառիչներով դիտարկումներ են կատարվել մթնոլորտում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 1246 փորձանմուշ, որոնցում որոշված նյութերի միջին տարեկան կոնցենտրացիաները ՍԹԿ-ները չեն գերազանցել:




Պասիվ նմուշառիչներով մթնոլորտային օդի դիտարկումները հանրապետության տարբեր բնակավայրերում

Պասիվ նմուշառիչներով օդային ավազանի դիտարկումներ կատարվել են նաև հանրապետության Կապան, Քաջարան, Չարենցավան*, Սևան քաղաքներում, Սյունիք (Սովխոզ) գյուղում: Վերցված օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները:


Ընդհանուր առմամբ Կապան քաղաքի 11 դիտակետից վերցվել է օդի 1034 փորձանմուշ, Քաջարան քաղաքի 15 դիտակետից՝ 1338, Չարենցավան քաղաքի 10 դիտակետից՝ 231, Սևան քաղաքի 15 դիտակետից՝ 624, Սյունիք գյուղի 9 դիտակետից՝ 846 փորձանմուշ: Նշված բնակավայրերում որոշված ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել ՄԹԿ-ները:

Ստորև տրվում են ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիաների գրաֆիկական պատկերները՝ ըստ քաղաքների:

Ծծմբի երկօքսիդ (SO₂)



Ազոտի երկօքսիդ (NO₂)



* Չարենցավանում դիտարկումները սկսվել են հոկտեմբերից

ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐ

2014թ.-ին Հայկումնոնիտորինգի կողմից մակերևութային ջրերի որակի դիտարկումներ իրականացվել են հանրապետության 40 գետի, Արփա-Սևան թունելի, Արփիլձի, Ախուրյանի, Ապարանի, Ագատի, Կեչուտի ջրամբարների և Երևանյան լճի 126 դիտակետում, որտեղից վերցվել է 1013 փորձանմուշ: Վերցված փորձանմուշներում որոշվել է միջին հաշվով 40-ական ցուցանիշ: Իրականացված դիտարկումների արդյունքները բերված են աղյուսակներ 1-3-ում:

ՀՀ կառավարության կողմից «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75 Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Եթե մակերևութային ջրային մարմնի որակի տարբեր ցուցանիշներ ընկնում են որակի տարբեր դասերի մեջ, ապա վերջնական դասակարգման մեջ հաշվի է առնվում վատագույնը: Օրինակ՝ եթե կոնկրետ ջրային մարմնի մեկ ցուցանիշ ցույց է տալիս «անբավարար» (4-րդ դաս) դասի կարգավիճակ, իսկ մնացած բոլորը ցույց են տալիս ավելի լավ կարգավիճակ, ապա այդ ջրային մարմինը դասակարգվում է «անբավարար» կարգավիճակի դասին (4-րդ դաս): Գործում է հետևյալ սկզբունքը. «Եթե մեկը վատ վիճակում է, ապա բոլորն են վատ վիճակում»:

ՀՀ գետերի ջրի քիմիական որակը 2014թ.-ին

Աղյուսակ 1.

Ջրավազանային կառավարման տարածք	Գետավազան	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը/ Դիտակետի համարը	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք	Դեբեդ գետի ավազան	Փամբակ	0.5 կմ գյ. Հարթազյուղից վերև (1)	-	-	2-րդ
			0.5 կմ ք. Մալիտակից ներքև (2)	Նիտրատ իոն	4-րդ	4-րդ
			0.6 կմ ք. Վանաձորից վերև (3)	Նիտրատ իոն	3-րդ	3-րդ
			4.5 կմ ք. Վանաձորից ներքև (4)	Նիտրատ իոն	3-րդ	5-րդ
		Նիտրիտ իոն, ընդհանուր անօրգանական ազոտ		4-րդ		
				Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	5-րդ	
Դեբեդ			0.5 կմ Մարցիգետ գետի թափման կետից ներքև (5)	-	-	2-րդ
			0.5 կմ ք. Այրումից վերև (6)	Նիտրատ իոն, ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ

Ջրավազանային կառավարման տարածք	Գետավազան	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը/ Դիտակետի համարը	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք	Դեբեդ գետի ավազան	Դեբեդ	Սահմանի մոտ (7)	Նիտրատ իոն, ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ
		Ձորագետ	0.5 կմ ք. Ստեփանավանից վերև (8)	-	-	2-րդ
			Գետաբերան (10)	-	-	2-րդ
		Տաշիր	0.5 կմ գյ. Միխայելովկայից վերև (11)	ԹՔՊ, ամոնիում իոն	3-րդ	3-րդ
			0.5 կմ գյ. Սարատովկայից ներքև (12)	Ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
		Մարցիգետ	Գետաբերան (13)	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ
		Ախթալա	Գետաբերան (14)	Ամոնիում իոն, այլումին	3-րդ	5-րդ
				Մոլիբդեն, կոբալտ	4-րդ	
				Ցինկ, պղինձ, կադմիում, մանգան, երկաթ, սուլֆատ իոն, կախված մասնիկներ	5-րդ	
		Գարգառ	գյ. Կուրթանի շրջանում (210)	-	-	2-րդ
			Ակունք (342)	-	-	2-րդ
		Շնող	Գետաբերան (343)	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, երկաթ	3-րդ	5-րդ
				Մոլիբդեն	5-րդ	
		Աղստև գետի ավազան	Աղստև	1.2 կմ ք. Դիլիջանից վերև(15)	-	-
	0.5 կմ ք. Դիլիջանից ներքև (16)			Նիտրիտ իոն	3-րդ	4-րդ
				Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	4-րդ	

Ջրավազանային կառավարման տարածք	Գետավազան	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը/ Դիտակետի համարը	Ջրի որակի ցուցանիշ2	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք	Աղստև գետի ավազան	Աղստև	1 կմ ք.Իջևանից վերև (17)	-	-	2-րդ
			Սահմանի մոտ (18)	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ
		Գետիկ	0.5 կմ ք. Ճամբարակից վերև (19)	-	-	2-րդ
			Գետաբերան (20)	-	-	2-րդ
Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք	Ախուրյան գետի ավազան	Ախուրյան	0,5 կմ գյ. Ամասիայից վերև (31)	-	-	2-րդ
			1 կմ գյ. Ամասիայից ներքև (32)	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն	3-րդ	4-րդ
				Ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
			0.8 կմ ք. Գյումրիից վերև (33)	-	-	2-րդ
			5 կմ ք. Գյումրիից ներքև (34)	Նիտրատ իոն	3-րդ	5-րդ
				Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն	4-րդ	
				Ամոնիում իոն, կախված մասնիկներ	5-րդ	
		0.5 կմ գյ. Երվանդաշատից ներքև (35)	Ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ	
		Աշոցք	0.5 կմ գյ. Արտաշենից վերև (36)	-	-	1-ին
			Գետաբերան (37)	-	-	2-րդ
		Կարկաչուն	Գետաբերան (38)	ԹՔՊ, նիտրատ իոն	3-րդ	5-րդ
Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	4-րդ					
Նիտրիտ իոն	5-րդ					

Ջրավազանային կառավարման տարածք	Գետավազան	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը/ Դիտակետի համարը	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը			
Աղստև գետի ավազան	Մեծամոր գետի ավազան	Մեծամոր	10 կմ ք. Վաղարշապատից հարավ (40)	ԹՔՊ, նիտրիտ իոն, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ			
				Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	5-րդ				
			11 կմ ք. Վաղարշապատից հարավ-արևելք (41)	ԹՔՊ	3-րդ	5-րդ			
				Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ				
				Ֆոսֆատ իոն	5-րդ				
			0.5 կմ գյ. Ռանչպարից ներքև (42)	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն	3-րդ	5-րդ			
				Ֆոսֆատ իոն	5-րդ				
			Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք	Քասախ գետի ավազան	Քասախ	0,5 կմ ք. Ապարանից վերև (43)	-	-	2-րդ
						0,5 կմ ք. Ապարանից ներքև (44)	Ընդհանուր անօրգանական ազոտ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	5-րդ								
1 կմ ք. Աշտարակից վերև (45)	Ֆոսֆատ իոն	3-րդ				3-րդ			
3.5 կմ ք. Աշտարակից ներքև (46)	Ֆոսֆատ իոն	3-րդ				3-րդ			
Գետաբերան (47)	ԹՔՊ, ընդհանուր անօրգանական ազոտ	3-րդ				4-րդ			
	Նիտրատ իոն, ֆոսֆատ իոն	4-րդ							
Գեղարոտ	0.5 կմ գյ. Արագածից վերև (48)	-			-	2-րդ			
	Գետաբերան (49)	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն			3-րդ	3-րդ			

Ջրավազանային կառավարման տարածք	Գետավազան	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը/ Դիտակետի համարը	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը	
Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք	Քասախ գետի ավազան	Հախավերդ	0.5 կմ գյ. Փարպիից ներքև (50)	ԹՔՊ, ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ	
			գյ. Գեղամավանի մոտ (51)	ԹՔՊ	3-րդ	3-րդ	
	Հրազդան գետի ավազան (միջին ներքին հոսանք)	Հրազդան	Հրազդան	0.5 կմ գյ. Քաղսիից ներքև (52)	ԹՔՊ, ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ
				0.5 կմ գյ. Արգելից ներքև (53)	Ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ
				0.5 կմ Արգնի ՀԷԿ-ից ներքև (54)	ԹՔՊ, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ
				գյ. Գեղանիստ (225)	ԹԿՊ ₅ , ԹՔՊ, նիտրիտ իոն, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	5-րդ
					Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, ընդհանուր անօրգանական ազոտ	5-րդ	
				6 կմ ք. Երևանից ներքև. գյ. Դարբնիկի մոտ (55)	Նիտրիտ իոն	3-րդ	5-րդ
					Լուծված թթվածին, ԹԿՊ ₅ , ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մանգան, ընդհանուր անօրգանական ազոտ, ընդհանուր ֆոսֆոր, կախված մասնիկներ	5-րդ	
				Գետաբերան (56)	ԹՔՊ, նիտրատ իոն, ընդհանուր անօրգանական ազոտ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ

Ջրավազանային կառավարման տարածք	Գետավազան	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը/ Դիտակետի համարը	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք	Հրազդան գետի ավազան (միջին ներքին հոսանք)	Հրազդան	Գետաբերան (59)	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	5-րդ
				Ֆոսֆատ իոն, մանգան	5-րդ	
				ԹԿՊ, նիտրատ իոն	3-րդ	
				ԹՔՊ, նիտրիտ իոն, մանգան, ընդհանուր անօրգանական ազոտ, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
			Ամոնիում իոն, Ֆոսֆատ իոն	5-րդ		
	Մարմարիկ գետի ավազան	Մարմարիկ	0,5 կմ գյ. Հանքավանից վերև (57)	–	–	2-րդ
		Գետաբերան (58)	–	–	2-րդ	
Սևանի ջրավազանային կառավարման տարածք	Ձկնագետ գետի ավազան	Ձկնագետ	0,5 կմ գյ. Սեմյոնովկայից վերև (60)	–	–	2-րդ
			Գետաբերան (61)	Ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ
	Մասրիկ գետի ավազան	Մասրիկ	0,5 կմ գյ. Վերին Շորժայից վերև (62)	–	–	2-րդ
			Գետաբերան (63)	Ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ
	Սոթք գետի ավազան	Սոթք	0.5 կմ հանքավայրից վերև (64)	–	–	2-րդ
			Գետաբերան (65)	–	–	2-րդ
	Վարդենիսի լեռներից սկսվող գետեր	Կարճաղբյուր	0.5 կմ գյ. Աղբյուրաձորից վերև (66)	–	–	2-րդ
			Գետաբերան (67)	Ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ
		Վարդենիս	0.5 կմ գյ. Վարդենիկից վերև (69)	–	–	2-րդ
			Գետաբերան (70)	Նիտրիտ իոն, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ

Ջրավազանային կառավարման տարածք	Գետավազան	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը/ Դիտակետի համարը	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը	
Սևանի ջրավազանային կառավարման տարածք	Վարդենիսի լեռներից սկսվող գետեր	Վարդենիս		Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	4-րդ		
		Մարտունի գետ	0.5 կմ գյ. Գեղիովիտից վերև (71)	Ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ	
			Գետաբերան (72)	Ընդհանուր անօրգանակ ան ազոտ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ	
				Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	5-րդ		
	Գեղամա լեռներից սկսվող գետեր	Արգիճի	0.5 կմ գյ. Լեռնակերտից վերև (73)	Ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ	
			Գետաբերան (74)	Ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ	
		Ծակքար	Գետաբերան (75)	Ֆոսֆատ իոն	4-րդ	4-րդ	
		Շողվակ	Գետաբերան (76)	Ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ	
		Գավառագետ	0.5 կմ գյ. Ծաղկավանից վերև (77)	-	-	-	2-րդ
			Գետաբերան (78)	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ	
	Ֆոսֆատ իոն			4-րդ			
	Արարատյան ջրավազանային կառավարման տարածք	Վեղի գետի ավազան	Վեղի	0.5 կմ գյ. Ուրցաձորից վերև (80)	-	-	2-րդ
2 կմ ք. Արարատից ներքև (82)				ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ	
Արփա գետի ավազան		Արփա	0.5 կմ ք. Ջերմուկից վերև (83)	-	-	2-րդ	
			0.5 կմ ք. Վայքից վերև (84)	-	-	2-րդ	
			0.5 կմ ք. Վայքից ներքև (85)	-	-	2-րդ	

Ջրավազանային կառավարման տարածք	Գետավազան	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը/ Դիտակետի համարը	Ջրի որակի ցուցանիշ2	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը	
Արարատյան ջրավազանային կառավարման տարածք	Արփա գետի ավազան	Արփա	0.5 կմ ք. Եղեգնաձորից վերև (86)	-	-	2-րդ	
			0.5 կմ գյ. Արենիից ներքև (87)	-	-	2-րդ	
		Եղեգիս	0.5 կմ գյ. Շատինից ներքև (88)	-	-	2-րդ	
		Արփա-Սևան թունել	0.7 կմ գյ. Ծովինարից վերև (68)	Նիտրատ իոն, ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ	
Հարավային ջրավազանային կառավարման տարածք	Մեղրի գետի ավազան	Մեղրիգետ	0.5 կմ ք. Մեղրիից վերև (89)	-	-	2-րդ	
			Գետաբերան (90)	-	-	2-րդ	
	Ողջի գետի ավազան	Ողջի	1.7 կմ ք. Քաջարանից վերև (91)	1.8 կմ ք. Քաջարանից ներքև (92)	ԹԿՊ, վանադիում, կոբալտ, երկաթ	3-րդ	5-րդ
					ԹՔՊ, մոլիբդեն, ընդհանուր անօրգանակ ան ազոտ, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
			Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մանգան	5-րդ			
			0.8 կմ ք. Կապանից վերև (93)	Մոլիբդեն, վանադիում, կոբալտ, երկաթ	3-րդ	3-րդ	
			6.8 կմ ք. Կապանից ներքև (94)	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ցինկ, կադմիում, երկաթ	3-րդ	5-րդ	

Ջրավազանային կառավարման տարածք	Գետավազան	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը/ Դիտակետի համարը	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
Հարավային ջրավազանային կառավարման տարածք	Ողջի գետի ավազան	Ողջի	6.8 կմ ք. Կապանից ներքև (94)	Պղինձ, վանադիում, սուլֆատ իոն	4-րդ	
				Մոլիբդեն, մանգան, կոբալտ	5-րդ	
		Արծվանիկ	0,5 կմ պոչամբարից վերև (95)	Մանգան, կոբալտ, երկաթ վանադիում	3-րդ	3-րդ
				Գետաբերան (96)	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ցինկ, երկաթ	3-րդ
			Կադմիում		4-րդ	
			Մոլիբդեն, մանգան, վանադիում, կոբալտ, ստիբիում, սուլֆատ իոն	5-րդ		
	Գեղի գետի ավազան	Գեղի	0.5 կմ գյ. Աջաբաջից վերև (97)	–	–	2-րդ
			Գետաբերան (98)	Մոլիբդեն, մանգան	3-րդ	3-րդ
	Որոտան գետի ավազան	Որոտան	0.5 կմ գյ. Գորայքից վերև (99)	–	–	2-րդ
			1 կմ ք. Մխիանից վերև (100)	–	–	2-րդ
			3 կմ ք. Մխիանից ներքև (101)	–	–	2-րդ
			0.5 կմ գյ. Տաթև ՀԷԿ-ից ներքև (102)	–	–	2-րդ
	Մխիան գետի ավազան	Մխիան	0.5 կմ գյ. Արևիսից վերև (103)	–	–	2-րդ
			Գետաբերան (104)	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ

Ջրավազանային կառավարման տարածք	Գետավազան	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը/ Դիտակետի համարը	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
Հարավային ջրավազանային կառավարման տարածք	Գորիս գետի ավազան	Գորիսգետ	3 կմ ք. Գորիսից վերև (106)	-	-	2-րդ
			1.5 կմ ք. Գորիսից ներքև (107)	ԹՔՊ	3-րդ	5-րդ
				Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն	5-րդ	

(*)- 1 -րդ դաս «գերազանց» քիմիական որակ, 2 -րդ դաս «լավ» քիմիական որակ, 3 -րդ դաս «միջակ» քիմիական որակ, 4 -րդ դաս «անբավարար» քիմիական որակ, 5 -րդ դաս «վատ» քիմիական որակ

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

ՀՀ մակերևութային ջրերի որակի էկոլոգիական նորմերով գնահատմամբ Փամբակ գետի ջրի քիմիական որակը գետի վերին հոսանքում՝ Հարթագյուղից վերև հատվածում, «լավ» որակի է (2-րդ դաս), Սպիտակ քաղաքից ներքև հատվածում՝ «անբավարար» որակի է (4-րդ դաս)՝ պայմանավորված նիտրատ իոնով, Վանաձոր քաղաքից վերև հատվածում՝ «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված նիտրատ իոնով, Վանաձոր քաղաքից ներքև ընկած հատվածում՝ «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոնների պարունակությամբ:

Դեբեդ գետի՝ Մարցիգետ գետի թափման կետից ներքև հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս): Դեբեդ գետի Այրումից վերև և սահմանի մոտ հատվածներում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և նիտրատ իոններով:

Չորագետ գետի ջուրը գետի ողջ հոսանքում «լավ» որակի է (2-րդ դաս):

Տաշիր գետի վերին հոսանքում՝ Միխայելովկայից վերև հատվածում, ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված ԹՔՊ-ով և ամոնիում իոնով, ստորին հոսանքում՝ «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով և ընդհանուր ֆոսֆորով:

Մարցիգետ գետի գետաբերանի հատվածում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով:

Ախթալա գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ցինկով, պղնձով, կադմիումով, մանգանով, երկաթով, սուլֆատ իոնով և կախված մասնիկներով:

Գարգառ գետի ջուրը գետի ողջ հոսանքում «լավ» որակի է (2-րդ դաս):



Շնող գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով:

Աղստև գետի վերին հոսանքում՝ Դիլիջանից վերև հատվածում, ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), Դիլիջանից ներքև հատվածում՝ «անբավարար» որակի է (4-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով, Իջևանից վերև հատվածում՝ «լավ» որակի է (2-րդ դաս), Իջևանից ներքև հատվածում՝ «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով:




Գետիկ գետի ջուրը գետի ողջ հոսանքում «լավ» որակի է (2-րդ դաս):



2014թ.-ին Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքում ջրի «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» քիմիական որակ (5-րդ դաս) պայմանավորող որոշ ցուցանիշների միջին տարեկան և ամենամսյա կոնցենտրացիաների փոփոխությունները ստորև բերված են գրաֆիկական պատկերների տեսքով.

Փամբակ և Դեբեդ գետեր



Ախթալա գետի գետաբերան (դիտակետ №14)





Ախտորյանի ջրավազանային կառավարման տարածք

Ախտորյան գետի Ամասիայից վերև հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), Ամասիայից ներքև հատվածում՝ «անբավարար» որակի (4-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով և ընդհանուր ֆոսֆորով: Ախտորյան գետի Գյումրիից վերև հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), Գյումրիից ներքև հատվածում՝ «վատ» որակի (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով և կախված մասնիկներով: Ախտորյան գետի Երվանդաշատից ներքև հատվածում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով:

Աշոցք գետի Արտաշենից վերև հատվածում ջուրը «զերազանց» որակի է (1-ին դաս), գետաբերանի հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս):

Կարկաչուն գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված նիտրիտ իոնով:

Մեծամոր գետի Վաղարշապատից հարավ, Վաղարշապատից հարավ-արևելք և Ռանչպար գյուղից ներքև ընկած հատվածներում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս) Վաղարշապատից հարավ ընկած հատվածում պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով, Վաղարշապատից հարավ-արևելք և Ռանչպար գյուղից ներքև ընկած հատվածներում պայմանավորված ֆոսֆատ իոնով:

Հրագրանի ջրավազանային կառավարման տարածք

Քասախ գետի Ապարան քաղաքից վերև հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), Ապարան քաղաքից ներքև ընկած հատվածում՝ «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոնների պարունակությամբ: Աշտարակից վերև և Աշտարակից ներքև հատվածներում գետի ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով, գետաբերանի հատվածում՝ «անբավարար» որակի է (4-րդ դաս)՝ պայմանավորված նիտրատ և ֆոսֆատ իոններով:

Գեղարոտ գետի Արագած գյուղից վերև հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» որակի է (3 -րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով:

Հախվերդ գետի Փարպի գյուղից ներքև հատվածում ջուրը «միջակ» որակի է (3 -րդ դաս)՝ պայմանավորված ԹՔՊ-ով և ֆոսֆատ իոնով:

Հրագրան գետի Գեղամավան գյուղի մոտ, Քաղսի գյուղից ներքև, Արգել գյուղից ներքև և Արգնի ՀԷԿ-ից ներքև հատվածներում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս). Գեղամավանի մոտ հատվածում պայմանավորված ԹՔՊ-ով, Քաղսից ներքև հատվածում պայմանավորված ԹՔՊ-ով և ֆոսֆատ իոնով, Արգելից ներքև հատվածում պայմանավորված ֆոսֆատ իոնով, Արգնի ՀԷԿ-ից ներքև հատվածում պայմանավորված ԹՔՊ-ով, նիտրատ և ֆոսֆատ իոններով: Գեղանիստ գյուղի մոտ ընկած հատվածում, Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ և գետաբերանի հատվածներում Հրագրան գետի ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս). Գեղանիստ գյուղի մոտ հատվածում պայմանավորված ընդհանուր անօրգանական ազոտով, ամոնիում և ֆոսֆատ իոններով, Դարբնիկ գյուղի մոտ հատվածում պայմանավորված լուծված թթվածնով, ԹԿՊ₅-ով, ԹՔՊ-ով, ամոնիում և ֆոսֆատ իոններով, մանգանով, ընդհանուր անօրգանական ազոտով, ընդհանուր ֆոսֆորով և կախված մասնիկներով, գետաբերանի հատվածում պայմանավորված ֆոսֆատ իոնով և մանգանով:

Գետառ գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով:


